Արդշինբանկ

№ 652-14568

«17» 12 2020թ.

Բանկային երաշխիք ԲԲԵՆ20/379-01
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 22.05.2020թ.-ին կնքված պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) պարտավորվում է բենեֆիցիարի՝ երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 2,875,000.0 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3. Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխիք տվող անձի կողմից:

4. Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 31.05.2021թ.-ը ներառյալ:

6. Կանխավճարը փոխանցվում է պրինցիպալի՝ երաշխիք տվող անձի մոտ սպասարկվող թիվ 2470100038500000 հաշվարկային հաշվին:

7. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տված անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները, կամ

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

8. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

9. Երաշխիք տվող անձի կողմից բենեֆիցիարի պահանջի հիման վրա վճարում կատարելու դեպքում երաշխիքային գումարը նվազում է համապատասխան գումարի չափով:

10. Երաշխիքի գումարը նվազեցվում է բենեֆիցիարի կողմից այդ մասին երաշխիք տվող անձին գրավոր դիմում տալու միջոցով:

11. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա երաշխիք տվող անձը երաշխիքով բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու երաշխիք տվող անձին

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am

սպասարկող ցանկացած բանկ, երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով երաշխիքի իր օրինակը:

12. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից երաշխիքի 11-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով:

13. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

14. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է բենեֆիցիարին:

15. Սույնով բենեֆիցիարը համաձայնություն է տալիս այն մասին, որ իր կողմից երաշխիքի բնօրինակը երաշխիք տված անձին վերադարձվելու դեպքում դադարում են երաշխիքից բխող երաշխիք տվող անձի հանդեպ բենեֆիցիարի իրավունքները:

16. Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

17. Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքի տրամադրման օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում նշված՝ քարտուղարի (գնումները համակարգողի) էլեկտրոնային փոստի հասցեին:

Գործառնական տնօրենի տեղակալ-
Վարկերի կենտրոնացված ձևակերպումների և
Ուղեկցման վարչության պետ Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ Հովհաննես Մկրտիչյան